ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ

22.09. 2017թ.

ժամը 10 [30]

Մասնակցում էին՝

**Բացողներ՝**

ՀՀ ԶՈւ ԱՀՏԱ վարչության ԳԴ և ՏԱ բաժնի ԳԴՊ և ՀՊՊ բաժանմունքի պետ, փոխգնդապետ Մ. Պողոսյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Սալայան:

**Օրակարգը՝**

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով գնման ԳՀ ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել են և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «ԴԱՌԵՍ» ՍՊԸ, «ԼԵԳԻՈՆ» ՍՊԸ (կոնսորցիում) |
| 2 | «Էյչ գրուպ» ՍՊԸ |

Բացող Ս. Սալայան

Բացող Մ. Պողոսյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

22.09. 2017թ.

ժամը 10 [30]

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության հրային, ՎԶՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռևտյան,

ՀՀ ԶՈՒ ԱՀՏԱ վարչության ԲՀԱ բաժնի ԲՀԱ ղեկավարման բաժանմունքի ավագ սպա, մայոր Ա. Օհանյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ա. Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «ԴԱՌԵՍ» ՍՊԸ, «ԼԵԳԻՈՆ» ՍՊԸ (կոնսորցիում) |
| 2 | «էյչ գրուպ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:.*

**2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա. Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ա. Ամիրյան)

3.1 ««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Նախահաշվային ընդհանուր գին | «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի, «ԼԵԳԻՈՆ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) առաջարկ | | «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի առաջարկ | | 1-ին տեղ զբաղեցրած մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | |
| 1 | Տեղեկատու (Վաշտի /մարտկոցի/ կրողի դիտողական քարոզչական լրակազմ) | հավաքածու | 200 | 28800000 | 30000000 | 30000000 | 25000000 | 30000000 | բանակցություն |
| 2 | Ձայնային տեխնիկայի պարագաներ (Հոգեբանական օգնության կետ) | հավաքածու | 21 | 10903914 | | | 13125000 | 15750000 | բանակցություն |

Ըստ ներկայացված տեղեկությունների «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մասնակիցների առաջարկած գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 29.09.2017թ. ժամը $10^{30}$-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ:

29.09.2017թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները՝ հրավիրված բանակցությանը ներկայացան «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի և «Էյչ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, որոնց հետ գնահատող հանձնաժողովի կողմից վարվեցին բանակցություններ: 1-ին չափաբաժնի մասով «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն առաջարկեց 28700000 ՀՀ դրամ, իսկ «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն նախկինում ներկայացրած գինը թողեց անփոփոխ: 2-րդ չափաբաժնի մասով նույնպես «Էյչ գրուպ» ՍՊԸ-ն նախկինում ներկայացրած գինը թողեց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ա. Ամիրյան)

4.1 03.10.2017թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «ԼԵԳԻՈՆ» ՍՊԸ):

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

4.4 Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացավ, որովհետև մասնակցի ներկայացրած գինը գերազանցում է տվյալ ապրանքի համար նախատեսված նախահաշվային գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/11» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող** | Վ. Գասպարյան |
| **Գնահատող** | Ա. Օհանյան |
| **Գնահատող** | Ս. Նիկոլյան |
| **Գնահատող** | Գ. Ռիստյան |
| **Գնահատող** | Ա. Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Ամիրյան |